ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«14» 05 2024 թ.
№ ՊՄՍՊ-944-400

«ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերությանը
ՀԿՀՀ 09104565
ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ. 2/21/59/բն.
հեռ. +37477 09 03 90
էլ. հասցեն՝ dag.javaxk@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերության միջև 14.08.2023թ. կնքված N ՀՄԱԱՇՁԲ-23-10/25-1 գնման պայմանագրի և Պայմանագրին կից 29.03.2024թ. կնքված N 1 փոփոխության (Այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերությունը պարտավոր էր մինչև 2023թ.-ի նոյեմբերի 30-ը կատարել 487,302,134 (չորս հարյուր ութսունյոթ միլիոն երեք հարյուր երկու հազար հարյուր երեսունչորս) ՀՀ դրամի չափով շինարարական աշխատանքներ, սակայն «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերության կողմից կատարվել է ընդամենը 374,819,734 (երեք հարյուր յոթանասունչորս միլիոն ութ հարյուր տասնինը հազար յոթ հարյուր երեսունչորս) ՀՀ դրամի չափով աշխատանքներ, այսինքն 112,482,400 (հարյուր տասներկու միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով աշխատանքները չեն կատարվել:

Հիմք ընդունելով Պայմանագր 3.1.4. կետի «ա» ենթակետը՝ (Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար) և «բ» ենթակետը՝ (Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը), ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. մայիսի 14-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 112,482,400 ՀՀ դրամի չափով չկատարված և 480,471,536 ՀՀ դրամի չափով դեռևս չնախատեսված աշխատանքների մասով:

Տեղեկացնում եմ, որ «ԿՈՆՏՐՖՈՐՍ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 5,567,879 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 23.04.2024թ. և 4,838,868 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 96,777,367 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 33,744,720 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. մայիսի 24-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 96,777,367 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 33,744,720 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ԿՈՆՏՐԱԲՈՐԴ» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. մայիսի 24-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2068 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ